

փոխեցին, այլև այլեղանակներուն յարմար անուններ դրին : Բայց աս տուամարը ընդունելի չեղաւ ուրիշ եւրոպացի ազգերուն, և Վաղղիացիք ալ տասուիրեք տարի գործածելէն ետե՛ 1806^{ին} յունուարի 1^{ին} մէկդի թողուցին, ու նորէն ընդունեցան Վրիգորեան տոմարը, որ հիմա Եւրոպայի ու Ղմերիկայի գրեթէ ամէն ազգերը կը գործածեն :

Վաղղիացիք աս տոմարին անօգուտ փոփոխութենէն ետե գտան չափուց և կշռոց միակերպութիւնը, որ ինչուան հիմա ընդհանրապէս կը գործածուի Վաղղիայի մէջ, ու նաև ուրիշ տեղուանք : Երանի թէ ամէնտեղ ալ ասիկայ գործածուէր, որ դիւրին ու շատ օգտակար ալ է :

Եւ դարուս մէջ Ֆուանսուա տը Եփօշաթոյ Փարիզու ատենակալը հրնարեց որ արհեստական ձեռագործները երբեմն երբեմն հանդէսով ժողովրդեան առջևը դրուին, և որուն որ ձեռագործը արժանաւոր սեպուի՝ անիկայ ոսկի կամարծաթի կամ պղնձի միտալով մը վարձատրուի : Եւ ընդ անգամ եղաւ աս հանդէսը Փարիզ 1797^{ին} Եւրէսի հրապարակին մէջ, տասը օր ժողովրդեան առջևը դնելով ձեռագործները :

Եւ ատ օգտակար եղաւ աս բանս արհեստները ծաղկեցնելու . այնպէս որ 1800^{ին} երկրորդ անգամ աս հանդէսը կատարուելուն՝ առջինէն շատ աւելի կատարեալ ձեռագործներ կային, և քանի գնաց աւելի մեծցաւ : Եւ սու վորութիւնս ուրիշ տերութիւններու մէջ ալ մտնելով, տարին անգամ մը կամ երկու տարին մէյմը արհեստաւորներու քաջալերութիւն տալու համար կը կատարուի աս հանդէսը :

Եւ թեւտասներորդ դարը լմնցնելով, համառօտ մը աս իննևտասներորդ դարուս վրայ ալ խօսինք : Բնալուծութիւնը, բնաբանութիւնը, մեքենաբանութիւնը շատ ծաղկեցան աս դա-

րուս մէջ, և ասոնց պտուղն են անմեծամեծ գիւտերը որ զամէնքը կը զարմացնեն . այսինքն շոգենաւը, շոգեկաւքը, արդեսեան ջրհորը, և այլն . որոնց վրայ Բազմավէպին մէջ ուրիշ տեղուանք խօսուած է . նոյնպէս շատ ծաղկեցան երկրաբանական գիտութիւնները, ու արուեստները : Եւ ասոնք թէ քանի որ քաղաքակաւնութիւնը ծաղկի Եւրոպայի մէջ, այնչափ աւելի երթալով գիտութիւններն ու արհեստներն ալ առաջ երթան . մեր ազգն ալ եթէ նոր գիւտեր ալ չկարենայ ինքիրմէ հնարել, գոնէ Եւրոպացւոց գտածները օգտակար կերպով իր երկրին ու պիտոյիցը յարմարցնէ . ասով փոխանակ իր երկրին բերքը ոչինչ ստրկով օտարաց ծախելու, զանոնք իրեն բանին բերէ, և ուրիշի ճարտարութեանը չկարօտի :

Եւ աս էր Եւրոպայի գիւտերուն պատմութիւնը ժամանակագրական կարգով համառօտ ոճով մը դնելուս վախճանը . բայց յուսանք որ երբեմն երբեմն ասոնց վրայ ընդարձակ տեղեկութիւն ալ տանք, ինչպէս ոմանց վրայ տուեր ենք օրագրիս առջի տալիներուն մէջ . որպէս զի մեր ազգին ալ աւելի օգտակար բան ըլլայ, և ոչ թէ իբրև պարզ հետաքրքրութեան նիւթ :

Հ . Մ . Ս

ՄԵԾԱԾԵԾ Զմարտութիւններուն խեղ հասցնելու համար՝ քիչ մը կարգէ դուրս տաքութիւն պէտք է . պաղ արիւնով վիճաբանութիւն ընել կ'ըլլայ, բայց նոր դիւտ գտնել չըլլար : Աղէկ փիլիսոփայ ըլլալու համար՝ կարծեմ թէ որչափ որ ճշգութիւն՝ նոյնչափ ալ տաքութիւն հարկաւոր է :

ՎՈՎՆԱՄԿ